

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 4

Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների  
հանրային խորհրդի 2020թ. հոկտեմբերի 30-ի հեռավար նիստի

ք. Երևան

սկիզբ՝ 30 հոկտեմբերի 2020թ., Ժ. 11:05  
ավարտ՝ Ժ. 11:35

**Մասնակցում էին՝** Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի (Հանրային խորհրդի) 11 անդամներից 7-ը:

**Բացակայում էին՝** Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ա. Ժամակոչյանը, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Մ. Սարգսյանը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի վիճակագրության ամբիոնի վարիչ Ա. Քթոյանը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պրոռեկտոր Հ. Ծպենցյանը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (ՀՀ ՊԵԿ) նախագահի տեղակալ Մ. Փաշայանի փոխարեն մասնակցում էր ՀՀ ՊԵԿ Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության խորհրդական Ս. Պադուրյանը, իսկ Ֆինանսների նախարարության Մակրոտնտեսական քաղաքականության վարչության պետ Է. Հակոբյանի փոխարեն՝ նույն վարչության ավագ մասնագետ Տ. Գրիգորյանը:

**Հրավիրված էին՝** ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատի) նախագահի տեղակալ Գ. Անանյանը, Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը:

Նիստի արձանագրությունը **վարում էր** Հանրային խորհրդի քարտուղար, Արմստատի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի ավագ մասնագետ Գ. Նշանյանը:

**Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.**

1. «2021 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծին հավանություն տալու հարցը,
2. Այլ հարցեր:

Բացման խոսքով հանդես եկավ Հանրային խորհրդի նախագահ պարոն Ա. Անանյանը:

**Քվեարկության դրվեց** նիստի օրակարգը:

Հանրային խորհրդի 7 անդամների կողմ քվեարկության արդյունքում այն **հաստատվեց**:

Հանրային խորհրդի նախագահ պարոն Ա. Անանյանը խոսքը փոխանցեց Արմստատի նախագահ պարոն Ս. Մնացականյանին: Պարոն Մնացականյանն առաջարկեց նախ 1 րոպե լռությամբ հարգել զոհված հերոսների հիշատակը, այնուհետև անցնել օրակարգի հարցերին:

**Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ՝** համաձայն օրակարգի, Արմատատի նախագահ պարոն Ս. Մնացականյանը համառոտ **ներկայացրեց** «2021 թվականի վիճակագրական ծրագրի» (Ծրագրի) նախագիծը:

Պարոն Մնացականյանը նշեց, որ դիտողություններ և առաջարկություններ ստանալու ակնկալիքով դեռևս ս. թ. հունիսի 10-ից Արմատատի պաշտոնական կայքում գետեղված և գրությամբ հիմնական վիճակագրական տեղեկատվություն օգտագործողներին կարծիքի ներկայացված ու նրանց կողմից դիտողությունների և առաջարկությունների ընդունման կամ չընդունման հիմնավորմամբ Արմատատի կողմից կազմված ամփոփաթեթերը նախապես Հանրային խորհրդի անդամներին էր ներկայացվել՝ մինչև հոկտեմբերի 26-ը դիտողություն և առաջարկություն ստանալու ակնկալիքով: Վերոնշյալ փաստաթղթերի վերաբերյալ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կատարված առաջարկությունները ներկայացնելու համար, պարոն Ս. Մնացականյանն առաջարկեց խոսքը փոխանցել Արմատատի նախագահի տեղակալ պարոն Գ. Անանյանին:

Արմատատի նախագահի տեղակալ պարոն Գ. Անանյանը խոսեց Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ա. Ժամակոչյանի կողմից արված առաջարկությունների մասին, նշելով, որ դրանք զուտ խմբագրական բնույթ էին կրում և պայմանավորված էին վերջին ժամանակաընթացքում տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների հետ: Նշված փոփոխություններն ընդունվել են Արմատատի կողմից և արդեն իսկ համապատասխան փոփոխությունները Ծրագրի նախագծում կատարված են: Ինչ վերաբերում է Աշխատուժի հետազոտության բովանդակային փոփոխությանը, ապա պարոն Ա. Անանյանը նշեց, որ դա հետագայում (քանզի այս պահին հարգելի պատճառով դա հնարավոր չէ) կքննարկվի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի հետ և արդյունքների մասին կիրազեկվի Հանրային խորհրդի անդամներին:

**Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ՝** Հանրային խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն **որոշեց** հավանություն տալ «2021 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծին:

**Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ՝** «Այլ հարցերի» շրջանակում ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ, Հանրային խորհրդի նորանշանակ անդամ պարոն Հ. Խաչատրյանը նշեց, որ կողմ է Ծրագրի նախագծին հավանություն տալուն, սակայն որպես նոր անդամ առաջարկեց, իհարկե ոչ Տարեկան ծրագրում ներառելու նպատակով, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում վարվող վիճակագրության և Սփյուռքի վերաբերյալ վիճակագրությանը վերաբերող ցուցանիշների առավել ընդլայնում, որքանով որ Արմատատը ճիշտ կհամարի:

Այս կապակցությամբ իր տեսակետն արտահայտեց նախ Հանրային խորհրդի նախագահ պարոն Ա. Անանյանը, նշելով որ տեղեկատվական ոլորտին վերաբերող վիճակագրության ընդլայնմանը մեկ անգամ Հանրային խորհրդի նիստերից մեկի ժամանակ արդեն իսկ անդրադարձ եղել է, սակայն առաջարկեց այն ընդունել ի

30.10.2020թ.


գիտություն և հետազոտ նիստերի ընթացքում մեկ անգամ ևս անդրադառնալ նշված և Սփյուռքի վերաբերյալ վիճակագրությունների ընդլայնման առաջարկություններին:

Արմատատի նախագահ պարոն Ս. Մնացականյանը հավելեց, որ Սփյուռքի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրումը միայն վիճակագրական խնդիր չէ, սակայն անհրաժեշտ է այն քննարկել և հույս հայտնեց, որ կգա մի ժամանակ, երբ այն այնուամենայնիվ լուծում կգտնի: Պարոն Մնացականյանը նշեց, որ ամեն օր քննարկումներ են տեղի ունենում միջազգային վիճակագրական կազմակերպությունների հետ և ամենօրյա լուծումները հաջորդ օրերին կարող են փոփոխության ենթարկվել: Նա հավաստիացրեց, որ շատ դժվար է արտակարգ ռեժիմում աշխատելը, սակայն պետք է առաջ շարժվել:

Նիստի եզրափակման խոսքով հանդես եկավ Հանրային խորհրդի նախագահ պարոն Ա. Անանյանը, տոկունություն և առողջություն մաղթելով բոլորին:

30.10.2020թ.

Հանրային խորհրդի  
նախագահ՝



Ա. Անանյան

Հանրային խորհրդի  
քարտուղար՝



Գ. Նշանյան